Հավելված
Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի և միջազգային առևտրի նախարարի
2026թ. սեպտեմբերի 2-ի
N-2817-Լ հրամանի

Կ Ա Ր Գ

ԴԻՎԱՆԱԳԵՏԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են դիվանագետի ատեստավորում անցկացնելու հետ կապված հարաբերությունները:

2. Դիվանագետի ատեստավորումն անցկացնում է արտաքին գործերի և միջազգային առևտրի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) մրցութային-ատեստավորող հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով)՝ «Դիվանագիտական ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ օրենք) 18-րդ հոդվածի 6-րդ մասի 2-8-րդ կետերում և 7-րդ մասի 4-10-րդ կետերում նշված դիվանագիտական ծառայության պաշտոն զբաղեցնող դիվանագետին դիվանագիտական աստիճան շնորհելու, օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում՝ ժամկետից շուտ կամ արտահերթ դիվանագիտական աստիճան շնորհելու, ինչպես նաև սահմանված կարգով դիվանագետին իր զբաղեցրած պաշտոնին համապատասխանությունը ստուգելու նպատակով:

3. Օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում դիվանագետի արտահերթ՝ մինչև երկու ավելի բարձր դիվանագիտական աստիճան կամ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված ժամկետից շուտ դիվանագիտական աստիճան շնորհելու նպատակով ատեստավորումն անցկացվում է հերթական ատեստավորումից առնվազն մեկ տարի հետո:

4. Դիվանագետին դիվանագիտական աստիճան շնորհելու նպատակով հանձնաժողովի նիստերը, որպես կանոն, անց են կացվում տարեկան երկու անգամ:

II.ԴԻՎԱՆԱԳԵՏԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄԸ՝ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ

5. Դիվանագետին հերթական դիվանագիտական աստիճան շնորհելու նպատակով ատեստավորումն անցկացվում է օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասում նշված ժամկետները լրանալուց հետո՝ հանձնաժողովի առաջիկա նիստի ընթացքում:

6. Դիվանագետի՝ հերթական դիվանագիտական աստիճան ստանալու ժամկետը լրանալուց հետո՝ հանձնաժողովի նիստից առնվազն մեկ ամիս առաջ, անձնակազմի կառավարման վարչությունը (այսուհետ՝ վարչություն) շրջաբերականի միջոցով դիվանագետներին տեղեկացնում է հանձնաժողովի առաջիկա կայանալիք նիստի մասին:

7. Շրջաբերականը ստանալուց հետո դիվանագետը հնգօրյա ժամկետում վարչություն է ներկայացնում իր կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարի կողմից տրված ծառայողական բնութագիրը, ինչպես նաև վերջին 6 ամսվա ընթացքում իր կողմից կատարված աշխատանքի մասին տեղեկանքը:

8. Ծառայողական բնութագիրը պետք է ներառի դիվանագետի մասին տվյալներ և նրա գործնական, մարդկային հատկանիշների ու ծառայողական գործունեության արդյունքների մասին հիմնավորված գնահատական:

9. Եթե դիվանագետը համապատասխան կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարի ենթակայության ներքո աշխատել է 6 ամսից պակաս, ծառայողական բնութագիր կարող է տրամադրել նաև դիվանագետի նախկին կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարը, որը ծառայողական բնութագիրը ներկայացնում է սույն կարգի 7-րդ և 8-րդ կետերով նախատեսված ժամկետներում և կարգով:

10. Դիվանագետն ատեստավորման նիստից առաջ պետք է ծանոթանա իր ծառայողական բնութագրին:

11. Ծառայողական բնութագիր չներկայացնելը չի կարող բացասաբար ազդել դիվանագետի ատեստավորման արդյունքների վրա:

12. Եթե դիվանագետը համաձայն չէ իր ծառայողական բնութագրին, ապա իր առարկությունները կարող է ներկայացնել հանձնաժողովին:

13. Վարչությունը, դիմումները ստանալուց և ամփոփելուց հետո՝ ատեստավորումից առնվազն տասը օր առաջ, ցանկը համաձայնեցնում է հանձնաժողովի նախագահի հետ:

14. Վարչությունը հանձնաժողովի նիստից առնվազն երեք օր առաջ փաստաթղթերը ներկայացնում է հանձնաժողովի անդամներին:

15. Հանձնաժողովի նախագահը ցանկում ներառված դիվանագետների հարցը ընդգրկում է հանձնաժողովի առաջիկա նիստի օրակարգում:

16. Հանձնաժողովն ատեստավորումն իրականացնում է փաստաթղթերի ուսումնասիրության եղանակով: Անհրաժեշտության դեպքում, հանձնաժողովը կարող է ընդունել բանավոր որոշում՝ դիվանագետին հարցազրույցի հրավիրելու մասին:

17. Հանձնաժողովը ատեստավորման արդյունքում եզրակացություն ընդունելու համար անցկացնում է գաղտնի քվեարկություն:

18. Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ քվեարկում է փակ գաղտնի քվեարկությամբ (Ձև N 1):

19. Հանձնաժողովի որոշումն ընդունվում է հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Հանձնաժողովի անդամների ձայների հավասարության դեպքում վճռորոշ է հանձնաժողովի նախագահի ձայնը:

20. Հանձնաժողովն ատեստավորման արդյունքների հիման վրա ընդունում է հետևյալ եզրակացություններից որևէ մեկը՝

1) շնորհել հերթական դիվանագիտական աստիճան.

2) շնորհել հերթական դիվանագիտական աստիճան՝ ժամկետից շուտ.

3) շնորհել արտահերթ՝ մինչև երկու ավելի բարձր դիվանագիտական աստիճան.

4) դիվանագիտական աստիճան շնորհելու հարցը քննարկել մեկ տարի հետո.

21. Սույն կարգի 20-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված դեպքում հերթական դիվանագիտական աստիճան շնորհելու հարցը երկրորդ անգամ քննարկելիս, բացասական եզրակացության դեպքում՝ որոշել դիվանագետի զբաղեցրած պաշտոնին համապատասխանությունը՝ սույն կարգի 3-րդ գլխի համաձայն:

22. Ատեստավորման արդյունքները հրապարակվում են ատեստավորումից հետո՝ եռօրյա ժամկետում:

23. Դիվանագետը կարող է բողոքարկել ատեստավորման արդյունքում ընդունված եզրակացությունը բողոքարկման հանձնաժողով՝ համապատասխան արդյունքները հրապարակելուց հետո՝ մեկօրյա ժամկետում:

24. Բողոքարկման հանձնաժողովը ձևավորվում է արտաքին գործերի և միջազգային առևտրի նախարարի (այսուհետ՝ նախարար) հրամանով՝ հանձնաժողովի անդամ չհանդիսացող անձանց թվից: Բողոքարկման հանձնաժողովը կազմված է առնվազն երեք անդամից:

25. Բողոքարկման հանձնաժողովը դիմումը քննարկում է այն ստանալուց հետո՝ մեկօրյա ժամկետում:

26. Բողոքարկման հանձնաժողովը, քննության առնելով դիմումը, կազմում է հետևյալ եզրակացություններից մեկը՝

1) բավարարել բողոքն ամբողջությամբ.

2) մերժել բողոքը՝ հանձնաժողովի եզրակացությունը թողնելով անփոփոխ:

27. Բողոքարկման հանձնաժողովը սույն կարգի 26-րդ կետով նախատեսված եզրակացությունը մեկօրյա ժամկետում ներկայացնում է հանձնաժողովին:

28. Հանձնաժողովն ատեստավորման արդյունքում ընդունված եզրակացությունը (բողոքարկված լինելու դեպքում՝ նաև բողոքարկման հանձնաժողովի եզրակացությունը) ներկայացնում է նախարարին, որն ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝

1) սույն կարգի 20-րդ կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերով նախատեսված եզրակացությունների դեպքում՝ առաջարկվող դիվանագիտական աստիճանը շնորհելու մասին.

2) սույն կարգի 20-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված դեպքում՝ դիվանագետին դիվանագիտական աստիճան շնորհելու հարցը հետաձգել մեկ տարով.

3) սույն կարգի 21-րդ կետով նախատեսված եզրակացության դեպքում զբաղեցրած պաշտոնին դիվանագետի համապատասխանությունը ստուգելու նպատակով ատեստավորում անցկացնելու մասին:

29. Դիվանագետը եռօրյա ժամկետում տեղեկացվում է սույն կարգի 28-րդ կետով կայացված որոշման մասին:

III. ԴԻՎԱՆԱԳԵՏԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄԸ՝ ԻՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՍՏՈՒԳԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ

30. Դիվանագետի՝ իր զբաղեցրած պաշտոնին համապատասխանությունն ստուգելու նպատակով ատեստավորումն անցկացվում է նախարարի կողմից՝ սույն կարգի 28-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված որոշման ընդունման դեպքում:

31. Ատեստավորումն իրականացվում է հարցազրույցի միջոցով:

32. Հանձնաժողովը ատեստավորման արդյունքում եզրակացություն ընդունելու համար անցկացնում է գաղտնի քվեարկություն (Ձև N 2):

34. Հանձնաժողովն ատեստավորման արդյունքների հիման վրա ընդունում է հետևյալ եզրակացություններից մեկը՝

1) դիվանագետը համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին.

2) դիվանագետը չի համապատասխանում զբաղեցրած պաշտոնին:

35. Ատեստավորման արդյունքները հրապարակվում են ատեստավորումից հետո՝ եռօրյա ժամկետում:

36. Դիվանագետը կարող է բողոքարկել ատեստավորման արդյունքում ընդունված եզրակացությունը բողոքարկման հանձնաժողով՝ համապատասխան արդյունքները հրապարակելուց հետո մեկօրյա ժամկետում:

37. Բողոքարկման հանձնաժողովը ձևավորվում է նախարարի հրամանով՝ հանձնաժողովի անդամ չհանդիսացող անձանց թվից: Բողոքարկման հանձնաժողովը կազմված է առնվազն երեք անդամից:

38. Բողոքարկման հանձնաժողովը դիմումը քննարկում է այն ստանալուց հետո մեկօրյա ժամկետում:

39. Բողոքարկման հանձնաժողովը, քննության առնելով դիմումը, ընդունում է հետևյալ եզրակացություններից մեկը՝

1) բավարարել բողոքն ամբողջությամբ.

2) մերժել բողոքը՝ հանձնաժողովի եզրակացությունը թողնելով անփոփոխ:

40. Բողոքարկման հանձնաժողովը սույն կարգի 39-րդ կետով նախատեսված եզրակացությունը մեկօրյա ժամկետում ներկայացնում է հանձնաժողովին:

41. Հանձնաժողովն ատեստավորման արդյունքում ընդունված եզրակացությունը, իսկ բողոքարկված լինելու դեպքում՝ նաև բողոքարկման հանձնաժողովի եզրակացությունը, ներկայացնում է նախարարին, որն ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝

1) դիվանագետը համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին.

2) դիվանագետը չի համապատասխանում զբաղեցրած պաշտոնին:

42. Դիվանագետը եռօրյա ժամկետում տեղեկացվում է սույն կարգի 41-րդ կետով կայացված եզրակացության մասին:

43. Դիվանագետը, սույն կարգի 28-րդ կամ 41-րդ կետերով կայացված եզրակացության հիման վրա ընդունված արտաքին գործերի նախարարի որոշման հետ համաձայն չլինելու դեպքում, այն կարող է բողոքարկել դատական կարգով:

Ձև N 1

ՔՎԵԱԹԵՐԹԻԿ

Դիվանագետին՝ դիվանագիտական աստիճան շնորհելու

	ԱԶԳԱՆՈՒՆ, ԱՆՈՒՆ	ՇՆՈՐՀՎՈՂ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ	ԿՈՂՄ	ԴԵՄ
			☐	☐

«____» _____ _____ թ.

Կ. Տ.

Ձև N 2

ՔՎԵԱԹԵՐԹԻԿ

Դիվանագետի՝ իր զբաղեցրած պաշտոնին համապատասխանության/ անհամապատասխանության

ԱԶԳԱՆՈՒՆ, ԱՆՈՒՆ		
	ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ Է ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԻՆ	☐
	ՉԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԻՆ	☐

«____» _____ _____ թ.

Կ. Տ.